Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԳՐԱԴԱՐԱՆ

Հրատարակություն
Ես. Վարդանեանցի

ՀԻՆԳ ԹՈՒՄՆԱՆՈՑ
ՌԻՄԱՌԻՄԷ

Ռիմոն տասում է. մարթը ամեն օր
Մէ թանար խօրագ չի կանա ուսի.
Թէ սանդ-սանդ չէ լու, սիրտը կու խառնի
Ու բերանն էլ խօմ շատ փիս կու հուսի.

Երես 21.

ԹԻՖԼԻՍ
Տպար. «Կուլտուրա»
Վէլիամինովսկ. 18.
1910

891.99
9--95

891.99
Գ-95
01 JAN 2009
14 NOV 2011
35917

Մ. ԳՈՒԼԱԶԵԱՆ

Հրատարակություն
Խ. Վարդանեանցի

ՀԻՆԳ ԹՈՒՄՆԱՆՈՑ ՌԻՄՍԻՄԷ

Ռիմսօն ասում է. մարթը ամեն օր
Մէ թահար խօրագ չի կանա ուտի.
Թէ ռանգ-ռանգ չէլա, սիրտը կու խանի
Ու բերանն էլ խամ շատ փիս կու հոտի.

Երես 21.

ԹԻՖԼԻՍ
Տպար. «Կուլտուրա»
Վէլեամինովսկ. 18.
1910

2 7 MAR 2013
26663
ՀԱՅ ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека
АрмССР
Ереванская
ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎԱՆ
3330-Ру



ՀԻՆԳ ԹՈՒՄՆԱՆՈՑ

ՌԻՄԱՍԻՄԷ

Ռիմսիմէն էսօր մէ քիչ ուշ զարթից.
տասէրկուսէմէն մէ չէթվեր անցած.
Զունքի իրիդուն ուշ էր տուն էկի,
Մէ տիղ էր էլի վիզիտով կանչած։

Դիլօրնիկն էլ ասաւ.— գուռը վուր ծեծից,
Սահաթի, կօսէ, չուրսի կէս կուլէր,
Լաւ էլ չէր կանում վուտի վրէն կանգնի,
Ման գալու, կօսէ, հարաքաթ չունէր։

Զիմ գիդի, կօսէ, ինչ էր պատահի,
Ինչի՞ էր էնէնց ծռէմէն անցի.
Շատ մանգալուցն էր ծնգնիրը դաթրի,
Թէ մէ քիչ աւել գինի էր կօնծի։

Շլապէն էլ գլխին ծուռ ունէր դրած,
Դօշն էլ կիսովի բաց արած ունէր,
Զիմ գիդի, կօսէ, շՈւքն էր նիղացրի,
Թէ դրուստ կապելու ժամանակ չունէր։

Մախլաս... վիկացաւ, էրեսը լաց,
Մազիրը դրստից, շինից իր հանդի,
Հալիլում էրդար էրեսը անդղից,
Տեսաւ վուր խիստ է աճկիրը ննդի։

Նիղացաւ Ռիմսօն, ջիգրը խիստ էկաւ.
Էլ բան չէր ճնացի աճկերու տիղը,
Զէր ուզից միղը հալիլուն դնի,
Ամա միտն էկաւ, վուր իրն է միղը։

Մակումը ինչօր բանիր էր խօսում,
Ինչօր մէ օմքնու ուշունց էր տալի,
Խան էլ իր բէդասլ գլուխն էր անիծում,
Վուր գիշիր-ցերեկ դուսն է ման գալի։

Մարթն էլ վուր փախաւ, պատճառը էտ էր,
Զը դիմացաւ կնգայ անկշտում լաշին,
Խիղճ տղէն էնէնց հալ ու մաշ էլաւ,
Վուր դառաւ դարդակ օսկոռն ու կաշին։

Միտն էբի էստունք Ռիմսիմէն էսօր
Ու բացւից սրտի վաղուցայ դաւթար,
Տեսաւ վուր ինքն էր միղավուր էլի,
Մարթը կի վուտով ու գլխով արթար։

Ինքը մարթու վրէն սուտ շառիր գցից,
Վուր միթամ տղէն մարթութին չունէ.
—Գիշիրը յիդս չէ պարկում, կօսէ,
Էնթավուր մարթը ախչիկն ինչ կանէ։

Խիղճ ջէհէլ տղի անումը կոտրից,
Կնգդիրքը նըրան էլ չէին աւտում.
Իրանց մէջ թաքուն ծիծաղում էին
Ու խօրվելի պէս դիփունքը ատում։

Վիրչը կի եփօր իմացան, տեսան,
Վուր տըղէն թամամ տղամարթ է դարթուն,
Գնացին Ռիմսօին ամանչեցնելու,
Վուր անմիղ տիղ է բամբասի մարթուն։

Ռիմսիմէն իրան արթարացնելու
Հիմի էլ ուրիշ շտուկա էր արի.
—Իմ մարթը, կօսէ, ախչիկ չէր սիրում
Ու շատ էր գիշիր նիղութին տալի։

Էտ վուր իմացան, ուփրօ վախեցան,
Նէժնի կնգդերանց լիղիքը տրաքից,
Հէնց էին խիթում ու հիռու փախչում,
Վունցօր մարթասպան գուղ աւազակից։

Խիղճ տղի գլուխը կտրւից քախկում,
Ամուրթու տանից դուսը չէր գալի.
Ուզում էր սրտով թազա կնիկ ուզի,
Ամա էլ օչով ախչիկ չէր տալի։

Կընիկն էլ միղը մարթուն էր դնում
Ու դժարացնում ռաղւօղի բանը,
Վունց ինքն էր ուտում, վունց մարթուն թողնում,
Վունցօր անդազէն ասում է շանը։

Մարթը վուր կնգայ օխտէմէն չէկաւ,
Նրա սիրեկների եախիցը բռնից,
Աղաչանք արից, վուտնիրը ննգաւ,
Վուր մէ բան օտկին նրանք իրանց կռնից։

Սուդումը թող գան, մօծմուրթին անին,
Վուր էտ ախչիկը դրուստ էնթավուրն է,
Վուր ամեն բանում կնիկն է միղավուր,
Մարթը արթար է, վունչիչ միղ չունէ։

Ռիմսօն վուր մարթու էտ բանը լսից,
Էնսահաթնէվէթ իր ճամփէն գթաւ.
Ինչ հին ու թազա սիրեկնիր ունէր,
Ձեռած դիփունանց տնիրը մտաւ։

Դիփունանց խրատից, վուր էտէնց չանին
Ու ամեն մէկին խոստացաւ քըրթամ.
—Օղօնդ ինձ, կօսէ, խայտառակ չանիք,
Ինչ ունիմ—չունիմ չիմ խնահի, կուտամ։

Դիփունքը կնգայ կուռը բռնեցին,
Քըրթամի վրէն էլ խօմ դաբուլ կացան,
Խօսկ տէին, վուր իր ուզածը կօնին
Ու քըրթամնիրն էլ էս գլխից ստացան։

Մնաց խիխճ մարթը ձեռնիրը ծալած,
Էլ չէր իմանում վունց էր ժաժ էկի.
Ուզում էր սրտով կընիկ, էրեխայ,
Ամա արժանի չէլաւ վունց մէկի։

Ռիմսօն ուզում էր անումը պահի,
Էնդուր իր շուրը մարթուն էր հաքցնում.
Մարթու չարածը արած էր անում,
Իր արածնիրը իրա մէջ թաքցնում։

Միտն էբի էստունք Ռիմսիմէն մէմէկ
Ու սկսից սրտի գաւթարը կարթալ.
Տեսաւ, վուր ինքն էր միղավուր էլի,
Մարթը կի իր մոդ հալալ ու արթար։

Միտն էբի, վուր հէնց փսակի գիշիր
Սիվէրես էլաւ իր մարթու առաչ,
Վուր ինչօր նրան էր օրէնքով հասնում,
Թուրմէ էն գլխից ուրիշն էր տարած։

Միտն էկաւ էն էլ, վուր էտու վրրայ
Մունչ կացաւ մարթը ու վունչիչ չասից.
Էտ լաւութինն էլ չիմացաւ Ռիմսօն,
Էտ էլ մոռացաւ ու ձեռած մարսից։

Զէր թողնում մարթուն, վուր առուտնիրը
Գողինքից վուխտին վիկենայ, հաքնի,
Իր առուտուրին մուղայթ կենայ,
Վուր խարաբ չըլի անումը դուքնի։

Զը դիմցաւ տղէն, խիստ հիւանդացաւ,
Լղարւից խիխճը, թէլի պէս բարկից,
Զէր կամաց-կամաց քիչ-քիչ պակսեցրից,
Վիրչը իր համա ջուգ կռաւօտ սարքից։

Զարացաւ Ռիմսօն, ցօփիք վիր ածից,
Ամա էրեսանց բան չասից մարթուն,
Տակումը դրից, խիստ օրթում կերաւ,
Վուր ինքն էլ պտէր ջիգր անի թաքուն։

Ըսկսից քիչ-քիչ լաւ շուրիր հաքնիլ,
Էրեսն էլ ռանգ-ռանդ դիդիրով ներկից,
Տանէ-մէն ջալդ-ջալդ դուս գընալ սովրից
Ու ռաստ էկողին չէր թողնում ձեռքից։

Ճամփին վուր ջէհէլ տղին էր տեսնում,
Զէր ծիծաղում էր ու աճկով անում,
Իժում դօստանում, ձեռած խօսկ տալի
Ու մարթու ջիգրը նըրամէն հանում։

Մէ քանի օմքնու ճանդումը գցից,
(Էնթավուր բանում մարթը խօմ շուն է)
Ամենքին թաքուն օրթում էր տալի,
Վուր նրամէն աւել սիրեկան չունէ։

Սկսից գիշիրնիր ջէր ուշ-ուշ տուն գալ,
Իժում խանդիսխան իսկի չէր գալի,
Մարթը վուր հարցնէր, նա պիտի խիթէր
Ու օրինաւուր ջուղաբ չէր տալի։

Ու մունջ էր կենում համփիրող մարթը,
Ուրիշ ինչ անէր, վուր չունէր չարա,
Խօմ իրա դլուխը չէր խայտառակի
Ու կնգայ բանիրն անի աշկարա։

Ռիմսօն յիդն ու յիդ դիփ առաչ գընաց,
Իժում էլ տղերանց իրանց տուն բերից,
Մէկը գընում էր, մէկէն էր գալի,
Չէր էլ ամանչում հարևաններից։

Մէ-մէ գամ կնգդիրք վուր հարցնում էին.
—Ախչի, Ռիմսիմէ, ո՞վ էր էն տղէն.
Նա վուրին բիձու տըղայ էր շինում,
Վուրին մամիդի, վուրին դէիդի։

Դըրանց ադաթը էտէնց է խօ միշտ,
Ասկականները իսկի չին հատնում.
Ուզում ին միթամ թաքուն բան բռնի,
Ամա հէնց իրանք իրանց ին մատնում։

Էտէնց էլ էլաւ Ռիմսօին մէ օր,
Իմացան նըրա սատանութինը.
Մէ առուտեհան մէ ջէհէլ տըղայ,
Ֆռանտ շուրիր հաքած էկաւ իր տունը։

Վուր հարևնիրը բան չը փիքր անին,
Ջայն բալկօնում թաւազա արաւ.
Ինքն էլ նըրամէն քիչ հիռու նստից,
Գլուխը քաշ արից, ամանչկուտ դարաւ։

Քիչ իժում, եփօր արեգագն էկաւ,
Բալկօնում կանգնից ու. օրը շուքից,
Վիկացան էն վուխտ, տուն մտան օթախ
Ու դուռն էլ ղասդի բաց թողին մէ քիչ։

Թող հարևնիրը խիալ չը տանին
Ու տեսնին դիփունք, վուր դուռը բաց է.
Բաց օթախի մէջ, օրը ցերեկով
Խօմ չի կարելի, վուր նըրան պաչէ։

Ամա Ռիմսիմէն լաւ գիդէր հանգը,
Գընաց օթախի կունճուլում նստից,
Տղին աճկով արաւ, հասկացրից իմքին,
Կուխքին նստեցրուց ու բանը դրստից։

Մէ խիստ սատանայ հարևան ունէր,
Օյնբաղ կնիկ էր, հատը չէր ճարի,
Նրամէն թաքցնիլը շատ դժար բան էր,
Շատ բան էր փորձի, էտու

Ինտէրես ննգաւ ու խիստ կը ուզում
Տեսնի Ռիմսօին ու տըղին մէտի,
Թէ ինչի բալկօն էլ չին դուս գալի,
Եա ի՞նչ ին շինում էսքան ժուգ էնդի։

Սուտ աղամանը վիկալաւ ձեռին,
Վուր նեքսիվ գընայ ու քիչ աղ ուզէ,
Ու թէ մէկ մէկու փաթթած տեհնի,
Միթամ ամանչից, ձեռած դուս վազէ։

Ու կամաց-կամաց, սուս ու փուս մտաւ...
Ջէր օրինավուր չէր էլ տուն մտի,
Վուր աղամանը մտէմէն ննգաւ
Ու յիդ դուս փախաւ հէնց էն նմուտին։

Ռիմսիմէն թուրմէ մաղիրը քանդած,
Նստած է սիրուն էն տըղի դոքին,
Գըլուխն էլ դայմ իր դօշին կպցրած՝
Էնէնց է, կօսիս դրախտումն է հոքին։

Խիխճերու քէփը շատ խարաբ էլաւ,
Էնսահաթնէվեթ ձեռած վիր թռան,
Խան կնգան էին ուշունցնիր տալի,
Խան միղը դնում ըթաց թողած դռան։

Հարևնի կնիկն էլ հէնց էտ էր ուզում,
Էլ օմքին չը մնաց, դիփունանց պատմից,
Սաղ քախկում ձեռած տէլէգրամ խփից,
Մարթուն էլ ասաւ, Ռիմսօին մատնից։

Մարթը չը կարաց բանը հաստատի
Ու էտու համա սիլա էլ ստացաւ.
Էն է ու էն է, էլ ձէն չը հանից,
Լիզուն կարճացրից, էլի մունջ կացաւ։

Թողից Ռիմսօին իր քէփի վըրէն,
Իրա նամուսին ու խճպտանքին.
Մենակ կի խնդրից, աղանչաք արաւ,
Վուր թաքուն անէ ու մէ քիչ կարքին։

Ամա էլ նըրան ով կանար բռնի,
Ո՞վ գուքար հիմի Ռիմսօի օխտից,
Ռանգ ռանգի համը տեսիլ էր, հաւնի,
Էլ չէր կշտանում մէ քանի ջխտից։

Հիմի էլ ինքն էր մարթու յիդ խռովի.
Խանդիսխան գիշիր վուր մօդ էր գալի,
Անգամ չէր դնում նըրա խնդիրքին,
Խփում էր գլխին ու քացի տալի։

Գընում էր մարթը էլի իր կռաւօտ
Թուլացած ջանով ու մօշլա առած,
Սաղ գիշեր բօղմից չէր կանում քնի,
Պապիրոզ ունէր դիպ ձեռին վառած։

Մտիկ էր տալի Ռիմսիմէն թաքուն,
Ծիծաղում սրտում ու իրան գովում,
Վուր շանց է տալի ու սովրացնում է,
Թէ վունց ին մարթիք մէկմէկուց խռովում։

Վուր մարթը աւել չը կարաց դիմնա,
Մէ օր էլ կնգան դէմուդէմն ասաւ.
—Էլ քի մօդ ապրիլ չիմ կանա, կօսէ,
Դանակը ինչկլի բողազիս հասաւ։

Հօրէսի դէնը վունց ես քու մարթն իմ,
Վունց էլ դուն կուլիս իմ կնիկը, կօսէ,
Էլ չարա չունիմ, պիտի բաժնուինք,
Ի՛նչ անիմ, խալխը ինչ գուզէ, խօսէ։

Մինք մէկմէկուն էնէնց թուխտ կուտանք,
Վուր փսակւելու ունենանք պրաւա.
Ես պիտի գընամ, ուրիշ կնիկ ուզիմ,
Դուն էլ մարթ ուզէ, էլ չունիմ դաւա։

Էլ էս ապրելուն չիմ կանա դիմնա,
Էսթավուր օրիր տանիլ չիմ կանա,
Վուր իմ կնիկ ըլիս մենակ անումով,
Ես քախցած մնամ, խալխը կշտանա։

Ռիմսիմէն դըրան վաղուց էր սպասում,
Զուղաբն էլ վաղուց հազիր էր արի.
—Գնա՛, ես ձեռդ չիմ բռնում, կօսէ,
Վաղուց ինձ համա փալաս իս դարի։

Ամա կի ինչկլի դուն չը հաստատիս
Իմ բուզուլթինն ու աննամուսութին,
Նուր փսակւելու իրաւուք չունիս,
Խալխը դիփունքը քիզ պիտի ստին։

Խուղիմ քու գլուխը, թազա կնիկ, կօսէ,
Միթամ քիզ համա ես կընիկ չէի՞,
Ես գիդիմ էլի, ովոր քիզ դուզէ,
Լազաթ կու տեսնէ, վունցօր ես էի։

Էս անդաճնիրուդ բամբակնիր հանէ,
Վուր քի պէս մարթուն չին սիրում կնգդիրք,
Մարթ պիտի էրկաթ ու փոլադ ըլի,
Վուր կնիկը չանէ իր մարթուն խնդիրք։

Քու ուզած ախչիկ չիս կանա գթնի,
Թէ պառաւ գուզիս, էտ ուրիշ բան է,
Զահեղնիր պիտի մէգլուխ քէփ անին,
Աշխարքից ուրիշ ով ինչ կու տանէ։

Քիզ սօվէտ կուտամ էլ կընիկ չուզիս,
Էնէնց, մէ-մէ գամ եօլա կու գընաս,
Ես էլ մարթ իսկի չը պիտի ուզիմ,
Թէ չէ կու տեսնիս ու կու իմանաս։

Հիմիկւայ խալխը խիստ աճկածակ ին.
Էլ օչով մէկով չէ դաբուլ անում,
Վունց մարթն է իրա կնգանով հերիք,
Վունց կնիկը իրա մարթով կշտանում։

Միր Քրիստոնական զակոնն էլ փիս է,
Ինչկլի մահ մէկի շլինքին ին բարցում,
Թէ վՃուրը ինչքան իշտահի ունէ,
Էտ բանի մասին իսկի չին հարցնում։

Տէրը. բարի տա էլի թուրքերուն,
Նըրանց ադաթը խիստ լաւ է էլի,
Լազաթն էլ թուրմէ նրանք ին գիդացի,
Վուր էնէնց սիրուն զակոն ին դրի։

Էստի մարթն էնքան փիքրի չէր էկի,
Վուր կնգայ խօսկը կտրիլ էր տարի,
Թէ թուրքերու մէջ էտ իրաւունքը
Զակոնը մենակ մարթուն է տալի։

Միր ադաթն էլի աղբաթի խէր է,
Ամենքին մայնց մէ հատ է գալի,
Թուրք կնգդիրքը կի մէ քանի հոքի
Մենակ մէ մարթուն մտիկ ին տալի։

Ինտէրեսնի էր, թէ էնչախ Ռիմսօն
Էտ խօսկի վըրէն ինչ պտէր ասի,
Կանանը ասելու էլի բան գթնի,
Թէ կու մունջ կենար ու էլ չէր խօսի։

Մախլաս, չը կարաց էստումն էլ ախտի,
Խիխճ տղի միտկը դիփ ուրիշ տիղ էր.
Ուզում էր թազա կնգայ համ տեսնի
Ու ջէր հին կնգայ գլուխ պիտի եղէր։

Ամա չը կարաց մուրազին հասնի,
Ռիմսօն սատանի ձիուն էր նստի.
Զէր ուզում, վուր էն տըղէն էրեսնի
Ու աշխարքէմէն համ առնէ պիտի։

Գրադարան
Библиотека
3329

Բաժնուից մարթն ու գընաց իր ճամփին,
Անիծից իրա իղբալն ու բախտը,
Վուր իրա կնգան խալիսը վայելի,
Ինքը կի անկնիկ անցկացնի վախտը։

Գընաց ու գընաց, էն էր ու էն էր,
Էլ նա չը տեսաւ Ռիմսօի էրես,
Անիծից նըրա անկշտում գլուխն էլ,
Վուր ունի էնքան մարթու ինտէրես։

Ու անց էր կացնում օրիրը մենակ,
Զուգ օթախ ունէր իր համա սարքած.
Մենակ գիշիրն էր էրազում տեսնում
Իրա Ռիմսօին իրա մօդ պարկած։

Էտ էրազներով խափւում էր խիխճը
Ու էտէնց թաքուն եօլա էր գընում.
Զարթնում էր մէբաշ, տեսնում էր չը կայ,
Մի ախ էր քաշում ու էլի քնում։

Չէր ուզից մէ լաւ սիրեկան պահի
Ու տուն ու տիղը դիփ նըրան պահ տա,
Ամա վիրչն էտ էլ մոկէմէն հանից,
Էլ ախչկերանց չէր ուզում աւտա։

Ռիմսօն էլ ուրիշ թազա մարթ չուզից,
Իր ասած խօսկին նա հաստատ կացաւ,
Կանդրաբանդ մարթիք բլօմա կի ունէր,
Առանց զալմաղալ ու հազիր անցաւ։

Չէր դիփունանց մօդ անփուղ էր գնում,
Փուղի ինտէրես իսկի էլ չունէր,
Խանդիսխան ինքն էր տըղին փուղ տալի,
Օղանց կի սիրուն ու զօչաղ ըլէր։

Վիրչը վուր տեսաւ մուշտարիք շատ ին,
Համ լաւ-լաւ տըղերք, համ փուղը բլօմա,
Չէր կամաց-կամաց բացրացրից գինը
Ու վիրչը մէբաշ շինից հինգ թուման։

Ծծիրը մէ քիչ բամբակով լքցրից,
Ցեղիվը դրից մէ եքա բալիշ,
Աճկիրն ու ունքիր դիղիրով ներկից,
Վուր միթամ օչով չէր էկի եանղլիշ։

Ամառը մէգլուխ բաղիրն էր ննգած,
Ձմեռը նօմեր ու գաստինիցա,
Լքցնում էր ջիբը ասիդնացիքով,
Առանց հարցնելու, թէ ում ջիբիցա։

Թէ մէ-մէ գամ էլ հարփածին ճանգէը,
Թամամ ռէբեցի հանգի էը պլոկում,
Ինչկի նա իրա ուզածին հասնէը,
Սա նըրա ջիբն ու ծուցիրն էը քոքում։

Իժում փուղավուր մէ օմքին գթաւ,
Ինչ ունէը-չունէը մէ ամսում կերաւ,
Վիրչը վուր տեսաւ էլ վունչիչ չունէ,
Պանղուրի տուից ու դուս էլ արաւ։

Վիրչը մէ չասանի տիղ գթաւ մէ տիղ
Մէգլուխ էնդի էը գընում ու գալի,
Էնդի էը թաքուն առուտուր անում,
Վուր խալխն աշկարա չէը մտիկ արի։

Մուշտարիքը շատ, աշխատանքը լաւ,
Թազա էը ջէը քիչ ու ինտէրեսնի,
Ինչքան ուզում էը, դիփ տալիս էին,
Թաքուն, վուր օչով խալխը չը տեսնի։

Սաղ քախկում ձեռաց դուս ննգաւ անուն,
Մէկ Ռիմսիմէ էը, մէկ էլ սաղ քաղաք,
Ո՞վ ասիս նըրան վուր չէը ճանչցի,
Էլ վաճառական, պրիկաշչիկ, դալաք։

Դրուստ է ամենքին թանգ էը նստեցնում,
Ամա օչով էլ չէը փոշիմանում,
Թուրմէ էնթաւուր դայդէքը գիդէ,
Վուր մարթը թամամ լազաթ է ստանում։

Եարսուն տարէմէն անցկացաւ խէլիմ,
Ամա ջէը շախը չէը կոտրում էլի,
Ջէը էլ կշտանում տղամարթկերանցից
Նըրա տաք սիրտը—անճանանչելի։

Թէ մէ էնթաւուր օմքին էը գթնում,
Վուր իրա սրտի թելին էը դիբչում,
Էլ չէը կամենում գՀլուի կուխքից,
Թամամ ծուրբէլի հանգի էը կպչում։

Շատ քախցը ու համով օՀլախնիը քանդից,
Շատի կնգամէն մարթիքը խլից,
Օչովի մօդ էլ էրգար չը կացաւ,
Դիփունանց վուխտին ճանապար դրից։

Ռիմսօն ասում էը. մարթը ամեն օր
Մէ թահար խօրագ չի կանա ուտի,
Թէ ռանգ-ռանգ չէլաւ, սիրտը կու խառնի
Ու բերանը խօմ շատ փիս կու հուտի։

Էտէնց էր իրա գլուխն արթարացում
Ու համ ուրիշին սովէտ էր տալի,
Շատ համսոննիր էր ուզում ունենայ,
Էտու համ էր նա չալիշ գալի։

Էրեսը քիչ-քիչ ճմշկիլ սկսից,
Մազիրն էլ լամիս ճաղարա դարաւ,
Էլ առաչւայ պէս օչով չէր սիրում,
Դիփունքը հիմի կանչում ին պառաւ։

Ռիմսօն էլ սկսից կարճ շուրիր հաքնիլ,
Զուլքիքը տակից դիփ էրևացրից,
Մէ քիչ էլ փէշը ինքը վի քաշից
Ու հարշիէքն էլ լամիս չը թաքցրից։

Ուզում էր խալխին իշտահի բերի,
Վուր հէնց չուզողն էլ տեանի ու ուզի,
Զունքի էլ օչով ձեռը չէր ննգնում,
Վուր իր դայդի լազաթին խուզի։

Ինքը ինչ անէր, վուր տըղամարթիք
Իրանից էտէնց հիռու ին փախչում,
Ինքը խօ էլի իշտահի ունէ
Ու քէփ է ուզում բաղում ու բախչում։

Դրուստ է, եարսուն ու հինգ տարեկան է,
Էլ էն առաչւայ գիժ Ռիմսօն չը կայ։
Ամա գրաղ կու դնէ, վուր քսան տարեկան
Զէհել ախչիկը իրա մօդ չը գա։

Ամա էլ օչով չէր ուզում աւտա,
Օչովին էնէնց էլ չէր դուր գալի,
Հալբաթ հանգիլ էր սրտի թէժ կրակը
Ու էլ առաչւայ լազաթ չէր տալի։

Զգրէմէն Ռիմսօն գինի էր խմում,
Ու խմելուց ուփրօ ժինիք էր գալի,
Միտն էին գալի հին սիրեկնիրը
Ու դիփին մէմէկ ուշունց էր տալի։

Ինչի՞ էն օրիր չին միտը բերում,
Վուր իրա համա գլխնիր ին պատրի,
Գանա Ռիմսիմէն էնէնց էլ պառուի՞ց,
Վուր տըղամարթի իշտահին հատնի։

Մէ ասին, ախար, թէ ի՞նչն է պակաս,
Էրեսի ռանգ՞ը, թէ՞ դօշն ու քամակ,
Ինչ անինք, վուր քիչ մազիրն է սիպտակ,
Մազը խօմ անխիլք է, դուք էլ իք հրամանք։

Թող օվոր ղօչաղ ու ղայմ տղայ է,
Գա իր մարիփաթն ու զօռը փորցէ,
Էն օրը գցէ Ռիմսիմէն նըրան,
Վուր Ջան, հալաքաթն ու ռանգը կորցնէ։

Արունը էլի ջէր էփ է գալի,
Սիրտը տըղերանց համա է խփում,
Վուր միտն է բերում էն ջէհէլներին,
Հոքի է տալի, բերնից ջուր գնում։

Էրազներումն էլ դիփ տղերանց մօդն է,
Մէգլուխ նրանց սիրուն դօշին է կպած,
Մանկումն էլ մէգլուխ նրանց յիդ է խօսում,
Նրանց սփաթնիրն է իր սրտում տպած։

Օղանց Ռիմսօին մարթը չը պակսի,
Թէգուզ իր կինքում հաց էլ չի ուտի,
Լաւ շուրն ու ապրուստ ինչ գլուխն է տալի,
Վուր սիրտը սրտի տիղը չէ մտի։

Էլ չարա չունէր, տղերանցը թողից
Ու պառաւների եախիցը կպաւ,
Պառաւ խափիլը ուփրօ հիշա բան էր
Ու ձեռած սրտի թելերին դիբաւ։

Սկսից նրանց առչիվ դագրէխա ըլիլ,
Փէշը վի քաշիլ, քամակը խաղցնիլ,
Վիզը ծուռ ու մուր դէս ու դէն շուր տալ
Ու փասպանդ ապրանք էտէնցով սաղցնիլ։

Պառաւ սիրեկնիր խիստ բլօմա ճարից,
Հիմի էլ նըրանց կշտին էր գնում.
Թուրմէ նրանք ուփրօ լաւ խալխ ին էլի
Ու ջէհեներից լաւ ին գին գնում։

Պառաւը լաւ է, հաւնում է Ռիմսօն,
Մէկ էլ վուր դուսը խաբար չին տալի,
Ամա բանն էն է, վուր ղօչաղնիր չին
Ու Ռիմսիմէին էտ չէ դուր գալի։

Ինքը ջէր ղօչաղ, կրակ է վիր ածում,
Նըրանց վարուիլը լիղին է պատրում.
Շատ կամաց-կամաց ժաժ գալը գիդին,
Հարաքաթ չունին ու ջալդ ին դաթրում։

Ռիմսիմէն դրանից հիւանդանում է,
Ներուիքը շատ փիս աշա է ըլում,
Ման խատէրիկա, խան պօխօնդրիա,
Ման չարութենից սիրտն էլ է գնում։

Հղարւից խիխճը ու շատ էլ ;իղնից,
Օր օրի վրէն հալւում էր, մաշւում,
Էլ իր առաչւայ ջանի չէր գալի,
Ինչքան էլ հարուստ ապրուստ էր քաշում։

Շուրիրը լաւ-լաւ, քէվը անպակաս,
Ամա ինչ անիս, սիրտը կի քախցած,
Ակրիք փորելով փուրը չէր լքցւում,
Նա սէր էր ուզում, սէրը խիստ տաքցած։

Ռիմսօն ուզում էր ուդաւօլստուիէն,
Ուտիլն ու խմիլը պրաստօի բան էր,
Ինչ կօնէր ապրուստ, օսկի ու էրծաթ,
Թէ սրտի ուզած չը պիտի անէր։

Զէ՛, պառաւնիրը ձեռք չին տա իրան,
Նրանց խասիաթին չի դիմա Ռիմսօն,
Ղուրթ խօ չէր էնքան չէ պառւի ինքը,
Վուր նըրանց սազ գա, ըլի նրանց համսօն։

Պիտի փիքը անէ մէ ուրիշ իմքին,
Մէ բան մօգօնէ, մէ չարա անէ,
Թէ չէ մէ քանի ամիս չի քաշի,
Կու մեռնի ու սիվ խուղը կու տանէ։

Խուղն ինչի՞ ուտի, նա ուրախանայ
„Թանի վուր ջէր շատ ապրիլ է ուզում.
Ջէր ի՞նչ է տեսի էս աշխրքէմէն,
Վուր օչով իրան էլ չէ ափսոսում։

Պառաւնիրէմէն ձեռը վի կալաւ,
Զղւից նրանց բէդասլ էն սփաթներից,
Մէ ուրիշ թավուր իմքին փիքը արաւ.
Հիմի էլ պստի տղերանցը բերից։

Մէ քանի շկօլի աշկիրտնիր գթաւ,
Մէ թահար խափից ու ճանդը գցից,
Միամիտների դամարը մտաւ,
Հիմի էլ նըրանց թշիրը կծից։

Մօդ էին ըլում Ռիմսօի տանը,
Ծնողներից թաքուն ու ահ ու պուղով,
Քէփ էին անում ու ուրախանում,
Լազաթին, սիրուն ու առանց փուղով։

Ի հարկէ, ով էր նըրանց փուղ տուի,
Գանա Ռիմսիմէն չի գիդի՞, խամ ա՞,
Պիրիքիթ ինքն էր խանդիսխան տալի,
Էնէնց, պապիրոզ առնելու համա։

Էլ ուրօկնիրը մտէն գցեցին,
Օչովի աճկում շկօլը չէր գալի,
Եա ինչ կօնէին ուրօկն ու շկօլը,
Ուփրօ լաւ ուրօկ Ռիմսօն էր տալի։

Սրանք էլ լաւն էին, էտում խօսկ չունէր,
Ամա շատ էին ամութու քաշում,
Էնէնց վուր շատին ինքն էր սովրացնում,
Սէրը հասկացնում ու մօդիկ քաշում։

Համ էլ յիդն ու յիդ քէսատանում էր
Ու կամաց-կամաց պօրտմանը դարտկում,
Մաշում էր շուրը, խունանում շլապէն
Ու օրը օրին մտնում էր պարտկում։

Էլ չէր իմանում, թէ ինչ էր արի,
Էլ ինչ մօգօնի ու էնէնց ժաժ գա,
Ինչ հունարնիրով մարթկերանց խափի,
Ինչթավուր շինի էրեսին մասկա։

Պստի տղերանց էլ դիփ ճամփու դըրից,
Մէ խէրով բան էլ նըրանք չին էլի,
Մէ քանի տղի դէդէն ու մամէն
Կուլիլ ին յիդը, ամութ է կերի։

Ջանդամը, մայնց շատ փուղ ունենայ,
Վուր իրա խարջով սիրեկան պահէ,
Աճկը տղամարթկանց վըրէն չը մնայ,
Համ նըրա սիրտը, համ իրը շահէ։

Խիստ դժարացաւ Ռիմսօի բանը,
Դիփունանց համա դարիլ էր անգալ,
Էլ ումիկ չը կար, կտրուց չարէն
Ու սկսից թաքուն բուլարնիր ման գալ։

Հիմի չէր ջոդում ջէհել ու պառաւ,
Էլ վունչիչ չաժէր նրա համա տարիք.
Օվոր կանչում էր, գնում էր յիդը,
Նրան նիղացնում էր հիմի խիստ կարիք։

Ու կամաց-կամաց դուս էկաւ մօդից,
Համ մազանդէն էլ յիդն ու յիդ ննգաւ,
Էլ առաչւայ պէս մուշտարիք չունէր,
Էլ օրինաւուր գին տուող չը կար։

Ունէր օսկեղէն ու էրծթեղէն,
Հին սիրեկներից թաւազա բերած,
Սկսից մէ մէ հատ լօմբարդում տանիլ.
Տէրը իր համա վաղուց էր մեռած։

Իժում էլ ստացաւ փիս հիւանդութիւն,
Ինչօր զահրումար անուն ին ասում,
Համ էլ խմելուց կուրծքը թուլացաւ,
Լղարանում էր ու յիդը հազում։

Մէ խօսկով թամամ այբեջարացաւ,
Սփաթը դարաւ մեռելի հանգի,
Էլի սիրելու իշտահ չը կոցրից,
Ուզում էր էլի սիրեկան ճանգի։

Ամա ով կուտար, ով կուլէր գիժը,
Վուր Ռիմսիմէին հիմի էլ սիրէր,
Ով էր գլխէմէն ձեռը վիկաւի,
Վուր առաչւայ պէս աճկիրը չրէր։

Բաս էլ ինչ անէ, վուր բուլաւ չը գնա
Ու տրղամարթկանց կուռը չը քսի,
Շուրով ու կրասկով չը խափի խալխին,
Վուր սիրտըն էլի սէրի ձէն լսի։

Ու ցերեկ մէգլուխ ակոշկում նստած,
Մտիկ է անում սաղ օրը քուչում,
Գիշիրն էլ զուքած, նխշած սփաթով,
Մութ փողոցների կռնէն է քօչում։

Խան տուն է գալի գիշիրաայ կէսին,
Խան լուսաբացին, խան էլ չէ գալի.
Վուրդի է ըլում, ում տանը, ում մօդ,
Ինքն էլ չի գիդի, հաշիւ չէ տալի։

Էնդուր էլ ինչկլի կէսօրը պարկած,
Վուխտին վիկենալ չէ կարողանում,
Ու վուր հալիլում մտիկ է տալի,
Զզւանքից իրա սիրտն էլ է խառնում։

Մէ թահար էտէնց օր է անցկացնում,
Ինչկլի նուր մէկանց թազադան մթնի,
Վուր էլի զուքւի, զպլուի կօխտա
Ու էլի իրա բօլումը մանի։

Հէնց իրիգուն էլ էտէնց էր էլի,
Վուր էնէնց ուշ էր գիշիրը էկի,
Էնդուր էլ էնէնց ուշ զարթից էսօր,
Էնդուր էր էնէնց աճկիրը ննգի։

Շատ ուրիշ անցած օրերի նման
Էսօր էլ բացուից իր սրտի դաւթար,
Տեսաւ իր կինքը ու լաւ հասկացաւ,
Վուր էտէնց կինքին չը պիտի աւտար։

Հասկանում էր, թէ ինչքան լաւ կուլէր,
Վուր իր մէ մարթով զարուլ էր կացի,
Վուր էտ բեզրեցնող կինքը չէր մոի
Ու վիրչը իրա գլուխը չէր լացի։

Ինքն էլ աշխրքում անում ունենար,
Նամուսով խալխի էրես էր տեսի.
Ունենար օջախ, վուրթիք—տղայ, ախչիկ
Ու տէր էր դարի հարսի ու փեսի։

Միտն էրի էստունք Ռիմսիմէն մէկ էլ,
Ամա էլ վունչիչ չի կանա օտկի.
Անցածը անցած է, էլ յիդ չի դառնայ,
Թէգուզ իր ձեռով իր գլուխը քօթկի։

ՀՀ Ազգային գրադարան
NL0335128

26663

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1) Դալլաքի ախչիկը . . . . . 5 կ.
2) Բուդդանի գանգատը . . . . . 5 կ.
3) Հինդ Թուքմանոց Ռիմսիմէ . . . 5 կ.

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸՏԵՄՆԵՆ

4) Դալլաքի ախչկա սիրեկնիրը
5) Մագամ Միրվելովայի պանօրամը

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

Յանկացողները կարող են ստանալ «Կուլ-տուրա» տպարանից (Վէլեամինովսկ. փ.)։